



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՎԱԾ, ԳԵՐԵՎԱՐՎԱԾ, ԱՆՀԱՅՑ ԿՈՐԱԾ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ԶԵՌՔ ԲԵՐԱԾ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՕՐԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Թուրքիայի գործուն և բացահայտ օժանդակությամբ և վարձկան ահաբեկիչների ակտիվ ներգրավմամբ Արցախի Հանրապետության նկատմամբ ձեռնարկած ռազմական հարձակումը (այսուհետ՝ պատերազմ), որի հետևանքով Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության բազմաթիվ քաղաքացիներ զոհվեցին, վիրավորվեցին, գերեվարվեցին և անհայտ կորան, ինչպես նաև զրկվեցին իրենց գույքից և կացարաններից,

նկատի ունենալով այն, որ հայրենիքի պաշտպանությանը ներգրավված են եղել նաև փաստաբանները և նրանց ընտանիքի անդամները,

նպատակ ունենալով գոտեպնդել այն փաստաբաններին, որոնց ընտանիքի անդամները զոհվել են, գերեվարվել են, անհայտ կորել են կամ հաշմանդամություն են ձեռք բերել,

կարևորելով փաստաբանական համայնքի կողմից հայրենիքի պաշտպանությանը մասնակցած անձանց ընտանիքներին հատուկ ուշադրություն դարձնելու միջոցով օրինակ ծառայելու անհրաժեշտությունը,

հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի պահանջները,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Յուրաքանչյուր փարվա համար սահմանել պատերազմի հետևանքով զոհված, գերեվարված, անհայտ կորած կամ հաշմանդամություն ձեռք բերած ընտանիքի անդամ ունեցող փաստաբանների ընտանիքներին հարգանքի փուրք մատուցելու օրեր:

2. Հաստատել Հարգանքի փուրք մատուցելու օրեր ընտրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

17 մարտ 2021թ.
թիվ 45-Լ
ք.Երևան

Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի
նախագահի 17.03.2021թ.
թիվ 45-Լ որոշման

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՕՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ

Կ Ա Ր Գ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Թուրքիայի գործուն և բացահայտ օժանդակությամբ և վարձկան ահաբեկիչների ակտիվ ներգրավմամբ Արցախի Հանրապետության նկատմամբ ձեռնարկած ուղղակի հարձակման (**այսուհետ՝ պատերազմ**) հետևանքով **զոհված, գերեվարված, անհայտ կորած կամ հաշմանդամություն ձեռք բերած ընտանիքի անդամ ունեցող փաստաբանների ընտանիքներին** (**այսուհետ՝ Փաստաբանի ընտանիք**) գոտեպնդելու և փաստաբանական համայնքի կողմից հարգանքի տուրք մատուցելու նպատակով յուրաքանչյուր տարվա համար օրեր ընտրելու կարգը:

2. Սույն կարգի իմաստով՝

- 1) **ընտանիքի անդամ** է համարվում ամուսինը (կինը), երեխան (զավակը), ծնողը (հայրը, մայրը), այդ թվում՝ որդեգրվածը և որդեգրողը, քույրը և եղբայրը.
- 2) **փաստաբանի ընտանիք** է համարվում այն ընտանիքը, որի անդամը պատերազմի հետևանքով զոհվել է, գերեվարվել է, անհայտ կորել է կամ ձեռք է բերել առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն, և ընտանիքի անդամներից մեկը փաստաբան է.
- 3) **հարգանքի տուրք մատուցելու օր** է համարվում սույն կարգի համաձայն Փաստաբանի ընտանիքի համար տվյալ տարվա համար ընտրված օրը կամ օրերը, որի ընթացքում իրականացվում են սույն կարգով նախատեսված միջոցառումները:

II. ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՕՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

3. Փաստաբանների պալատը հարցումների կամ հրապարակումների միջոցով բացահայտում և հաշվառում է սույն կարգի 2-րդ կետի կարգավիճակին համապատասխանող փաստաբանների ընտանիքներին:

4. Փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարը կամ ձևավորված աշխատանքային խումբը (**այսուհետ՝ Պատասխանատու**) փաստաբանի ընտանիքի անդամների հետ համագործակցելու միջոցով որոշում է տվյալ տարվա համար հարգանքի տուրք մատուցելու օրը կամ օրերը (օրինակ՝ կարող է ընտրվել զոհվածի ծննդյան կամ այլ հիշարժան օր կամ կարող է ընտրվել ընտանիքին սեզոնային աշխատանքի օգնության համար անհրաժեշտ որևէ օր կամ օրեր):
5. Յուրաքանչյուր տարվա համար, մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 15-ը, Պատասխանատուն հաստատում է հերթական տարվա հարգանքի տուրք մատուցելու օրերի գրաֆիկը, ինչի մասին իրազեկվում են փաստաբանները:

III. ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԱՏՈՒԳԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

6. Հարգանքի տուրք մատուցելու միջոցառումներն են՝
 - 1) զոհվածի շիրիմին այցելելը.
 - 2) զոհվածի հիշատակի համար միջոցառում կազմակերպելը.
 - 3) փաստաբանի ընտանիքին նվեր փոխանցելը.
 - 4) փաստաբանի ընտանիքին անհրաժեշտ աշխատանքներին (այդ թվում՝ այգեգործություն, վերանորոգում) մասնակցելը.
 - 5) փաստաբանի ընտանիքին հյուրընկալելը.
 - 6) Պատասխանատուի առաջարկությամբ այլ միջոցառում իրականացնելը:
7. Փաստաբանների պալատի կազմակերպած միջոցառումներին կարող են միանալ փաստաբանները:
8. Փաստաբանների ընտանիքների համար, անկախ սույն կարգի 6-րդ կետում նշված միջոցառումներից, ապահովվում է անվճար իրավաբանական օգնության տրամադրումը:

IV. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 17-ից:
10. 2021 թվականի համար հարգանքի տուրք մատուցելու օրերի գրաֆիկը Պատասխանատուն հաստատում է մինչև 2021 թվականի ապրիլի 15-ը: Հաստատված գրաֆիկը կարող է փոփոխվել կամ լրացվել: